№12(16)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2023

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

12 (16)

ԵՐԵՎԱՆ 2023
ЕРЕВАН 2023
YEREVAN 2023

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №12 (16). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2023. – 266 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0002-4377-1601
ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

ЗАМЕНА ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ РОМАНА В. ПИКУЛЯ «ФАВОРИТ»

Лилит Амаяковна Цатурян
tsaturyan-1997lilit@mail.ru

Аспирант кафедры армянского языка,
Ереванский государственный университет
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье рассматривается армянский перевод некоторых фразеологических единиц и пословиц в романе В. Пикуля «Фаворит». Представлены различные методы, предлагаемые в теории перевода для перевода фразеологических единиц, варианты замены, неровности, возникшие при переводе из-за сложности понимания смысла фразеологизма или пословицы, необходимости сохранения колорит подлинника и других факторов. Наиболее сложным является перевод фразеологизмов, используемых в играх слов, для которых переводчик постарался предложить интересные решения. Также рассматривается вопрос, какой вариант замены в каком случае предпочтительнее.
Ключевые слова: фразеологическая единица, замена, игра слов, стилистический признак, эквивалент, контекст, калькирование.

Ներածություն

Թարգմանության անհնարինության կամ դժվար թարգմանելիության խնդրի առջև կանգ ենք առնում հատկապես դարձվածային միավորների թարգմանության ժամանակ: Դարձվածային միավորների թարգմանության անհաջողությունը շատ դեպքերում պայմանավորված է նրանով, որ դրանք առաջին հայացքից հաճախ անճանաչելի են, և թարգմանիչը այն ընկալում է որպես ազատ բառակապակցություն,

ինչը հանգեցնում է բառային մակարդակում թարգմանության: Երբեմն թարգմանիչը, նկատելով բաղադրիչների միասնությունը, դրանք վերագրում է հեղինակի անհատական ոճին կամ հակառակը. ազատ բառակապակցությանը հաղորդում է կայուն բառակապակցության հատկանիշներ և փոխարինում դարձվածային միավորներով [2: 180]: Դարձվածքների թարգմանության համար թարգմանության տեսության մեջ առաջարկվում են տարբեր մեթոդներ: Նույնիսկ դարձվածքի բառարանային համարժեքի առկայության դեպքում անհրաժեշտություն է լինում թարգմանության այլ ուղիներ փնտրել, քանի որ տվյալ համարժեքը հարմար չի լինում համատեքստին: Երբեմն կարող է կիրառվել անհատական լուծում, երբ իրավիճակը պահանջում է այլ մոտեցում: Օրինակ՝ եթե մի դեպքում թարգմանիչը նախընտրում է դարձվածքը թարգմանել դարձվածքով, իսկ մյուսը՝ պատճենմամբ կամ փոխարինմամբ, ապա պետք է համարենք, որ երկուսն էլ ճիշտ են [2: 181]: Այս առումով շատ լեզվաբաններ դարձվածքների անտարրալուծելիության, բաղադրիչների միասնության չափանիշի հիման վրա կատարել են դասակարգումներ՝ դարձվածային սերտաճում (իդիոմ), դարձվածային միավոր, դարձվածային կապակցություն և դարձվածային արտահայտություն (Բալլի, Վինոգրադով, Լարին, Շանսկի): Հենց բաղադրիչների միասնության աստիճանից է կախված լիարժեք թարգմանության հնարավորությունը, համեմատաբար հաջողված ձևերի ընտրությունը [2: 182]: Վ. Վինոգրադովը կայուն կապակցությունները բաժանում է երեք մեծ խմբերի.

1. Բառային դարձվածքներ. սրանք իմաստային առումով կապված են բառերին՝ *լեզուն ատամների արանքում պահել (լռել, չխոսել).*

2. Ստորոգելիական դարձվածքներ. սրանք առած-ասացվածքներ, աֆորիզմներ և նման կայուն կապակցություններ են.

3. Համեմատական դարձվածքներ. ամրակայվել են լեզվում որպես կայուն համեմատություններ՝ *աղվեսի պես խորամանկ, երգում է սոխակի պես* [1: 180–181]:

Դարձվածային միավորների բառարանային լիարժեք թարգմանության հասնելու հնարավորությունը հիմնականում կախված է

բնագրի և թարգմանության լեզուների միավորների միջև հարաբերակցությունից.

1. Դարձվածային միավորը թարգմանության լեզվում ունի հստակ, համատեքստից կախում չունեցող համարժեք (իմաստային նշանակություն+կոննոտացիա):

2. Դարձվածային միավորը կարելի է փոխանցել թարգմանության լեզվին այս կամ այն համապատասխանությամբ, սովորաբար լիարժեք թարգմանությունից որոշակի շեղումներով:

3. Դարձվածային միավորը թարգմանության լեզվում չունի ո՛չ համարժեք, ո՛չ համանման տարբերակ, այսինքն՝ դարձվածքը փոխարինվում է ուրիշ, ոչ դարձվածային միջոցներով:

Կարելի է ասել՝ դարձվածքների թարգմանությունը լինում է դարձվածային և ոչ դարձվածային տարբերակներով [2: 183]:

Ըստ Վ. Վինոգրադովի՝ թարգմանչին, որը գիտի բնագրի լեզվի դարձվածային միավորների իմաստները և դրանց ոճական երանգավորումը, թարգմանության լեզուն այդ միավորի բովանդակությունը հաղորդելու չորս հնարավորություն է սովորաբար ընձեռում.

ա. Թարգմանության լեզվում կա բնագրի լեզվի դարձվածքին նույնական դարձվածք, որը ունի նույն իմաստը, ոճական երանգավորումը և ներքին կազմությունը, թեև պետք է նշել, որ այսպիսի համարժեքները կարող են ազգային յուրահատկություն, կիրառելիության տարբեր հաճախականություն ունենալ.

բ. Թարգմանության լեզվում կա համարժեք կամ իմաստով մոտ դարձվածային միավոր.

գ. Թարգմանության լեզվում կա ոճականորեն համարժեք դարձվածք նույն կամ մոտ իմաստով, բայց տարբեր կազմությամբ.

դ. Թարգմանության լեզվում կա իմաստով և ոճական երանգավորմամբ համապատասխան բառ [1: 183–184]:

Առավել բարդ է ազգային բնույթ ունեցող դարձվածքների թարգմանությունը: Հատկապես սահմանափակ են այն դարձվածքների թարգմանության հնարավորությունները, որոնք ունեն բովանդակային ազգային նշույթավորվածություն: Դրանք թարգմանելիս անհրա-

ժեշտ է ընթերցողին հաղորդել դարձվածքի հետ կապված արտալեզվական տեղեկատվությունը [5: 193]:

Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպում բավականին հաճախ են կիրառվում դարձվածքներ, առած-ասացվածքներ: Դրանց թարգմանությունը որոշակի դժվարություններ է առաջացնում: Միևնույն ժամանակ դարձվածքների կիրառությունը վեպում նպաստում է տարբեր միջավայրերի ստեղծմանը, մի միջավայրից մյուսին անցնելուն, հերոսների խոսքն ու բնավորությունը կերտելուն: Թարգմանիչը՝ Վ. Վարդանյանը, օգտագործել է դարձվածքների թարգմանության տարբեր եղանակներ՝ հնարավորինս պահպանելով բնագրի նրբերանգը:

Նկատենք, որ թարգմանիչը երբեմն դարձվածքներով է փոխարինում բնագրի բառերը կամ ազատ բառակապակցությունները: Այս կերպ փոխհատուցում է այն դարձվածքները, որոնք ստիպված է եղել մեկ այլ տեղ բառով, ազատ բառակապակցությամբ կամ նկարագրության եղանակով թարգմանել: Այսպես՝

В любом случае мы не ***упустим*** *престола русского…* [4: т. 1, 49] – *Բոլոր դեպքերում մենք ռուսական գահը* ***ձեռքից բաց չենք թողնի****...* [10: h. 1, 52]

Որոշ դեպքերում դարձվածքով է թարգմանվել բնագրի խոսակցական երանգավորում ունեցող բառը, ինչի շնորհիվ ինչ-որ չափով պահպանվել է բնագրի հուզաարտահայտչական երանգավորումը.

Наконец появилась Елизавета, ***распаленная*** *от гнева.* [4: т. 1, 50] – *Վերջապես հայտնվեց զայրույթից* ***կրակ կտրած*** *Ելիզավետան:* [10: h. 1, 53]

А ты, сестрица, ещё не ***образумилась****?* [4: т. 1, 52] – *Իսկ դու, քույրիկ, դեռ* ***խելքի չե՞ս եկել****:* [10: h. 1, 56]

А то ведь ***намаялся*** *уж … во как!* [4: т. 1, 123] – *Թե չէ արդեն* ***հալից ընկել****… տես ի՛նչ եմ դարձել:* [10: h. 1, 150]

Россия-то давно ***воззрилась*** *за хребты Балканские…* [4: т. 1, 93] – *Ռուսաստանը վաղուց է* ***աչքը տնկել*** *Բալկանյան լեռնաշղթայից այն կողմ....* [10: h. 1, 111]

Երբեմն դարձվածքով է փոխարինվել բնագրի՝ իմաստային առումով չեզոք կամ հակառակը՝ իմաստային գռեհիկ նրբերանգ ունեցող բառը.

В чаянии овса с мукою долго старался пономарь, но ***обессилел****, за что и был изгнан.* [4: т. 1, 76] – *Վարսակի ու ալյուրի երազանքով երկար չարչարվեց տիրացուն, բայց* ***հալից ընկավ****, որի համար և վտարվեց:* [10: h. 1, 88] (*Ուժասպառ լինել* իմաստային առումով չեզոք բառը փոխարինվել է դարձվածքով):

Чего ты тут ***залюбовался****?* [4: т. 1, 171] – *Ի՞նչ ես* ***ալիլ-մալիլ եղել****:* [10: h. 1, 215] (բացարձակապես խոսակցական երանգավորում չունեցող բառը փոխարինվել է դարձվածքով):

Погреметь *можно. На весь мир.* [4: т. 1, 90] – *Կարելի է մեծ* ***անուն հանել****: Աշխարհով մեկ:* [10: h. 1, 107] (*թնդալ, դղրդալ* բառերի փոխարեն դարձվածքի կիրառություն):

Я прежде как следует изучила русский язык, а уж потом ***брюхатела****…*[4: т. 2, 48] – *Ես նախ ինչպես հարկն է ուսումնասիրեցի ռուսաց լեզուն և միայն հետո* ***փորս տնկեցի****...* [10: h. 2, 63] (հասարակաբանությունը փոխարինվել է դարձվածքով):

Բացարձակ համարժեք սովորաբար ունեն նույն աղբյուրից ծագած դարձվածային միավորները (Աստվածաշնչից, հունա-հռոմեական դիցաբանությունից, համաշխարհային պատմությունից ու գրականությունից, գիտության, արվեստի բնագավառներից): Դրանք սովորաբար բառացի պատճենված դարձվածքներ են [11: 99–100]: Միջազգային այսպիսի դարձվածքները լեզու են մուտք գործել պատմական, միֆոլոգիական, գրականության աղբյուրներից՝ փոխանցվելով մի լեզվից մյուսին կամ հայտնվելով տարբեր ազգերի լեզուներում իրարից անկախ:

Кончайте идиотский ***сизифов труд****…* [4: т. 1, 247] – *Վերջացրե՛ք* ***սիզիֆյան*** *անմիտ* ***աշխատանքը****...* [10: h. 1, 318]

Екатерина ещё при вступлении на престол публично заявила, что Россия ***«ни за чьим хвостом не потащится»****, а теперь король Пруссии* ***протягивал ей свой хвост****.* [4: т. 1, 437] – *Եկատերինան դեռևս գահ*

բարձրանալիս հրապարակայնորեն հայտարարել էր, թե Ռուսաստանը ***«ոչ մեկի պոչից քարշ չի գա»****, իսկ հիմա նրան իր* ***պոչն է մեկնում*** *Պրուսիայի թագավորը:* [10: h. 1, 576]

… я с любой стороны света ***в долгу не останусь****…* [4: т. 2, 46] *– … Ես աշխարհի ուզածդ կողմից* ***պարտքի տակ չեմ մնա****…* [10: h. 2, 60]

И верьте, что в Пруссии ***дела пойдут опять как по маслу****… Я* ***не бросаю слов на ветер****.* [4: т. 1, 208] *– Հավատացեք, որ Պրուսիայում դարձյալ* ***գործերը հալած յուղի պես կգնան****... Ես* ***խոսքերս քամուն չեմ տալիս****:* [10: h. 1, 265]

Բացարձակ համարժեքով փոխարինվում են նաև այն դարձվածային միավորները, որոնք թարգմանության լեզվում ունեն հստակ, համատեքստից կախում չունեցող համարժեքներ.

… а что на них писано – теперь академики ***головы ломают****…* [4: т. 2, 95] *– ... հիմա ակդեմիկոսները* ***գլուխ են կոտրում****, թե ինչ է գրված դրանց վրա...* [10: h. 2, 125]

… укрепляя престиж Пруссии, ***не готовите ли вы для себя змею за пазухой****?* [4: т. 2, 156] *– Պրուսիայի հեղինակությունն ամրապնդելով՝* ***արդյո՞ք ձեզ կծող օձ չեք տաքացնում ձեր ծոցում****:* [10: h. 2, 206]

Вы начинаете ***игру с огнём****.* [4: т. 2, 37] *– Դուք սկսում եք* ***կրակի հետ խաղալ****:* [10: h. 2, 48]

Թեև պետք է նշել, որ առավել հաճախ հանդիպում են դարձվածքների՝ մասնակի համարժեքներով փոխարինումները.

А ежели сына мово не обучишь мудростям, – добавил майор Потёмкин, – ***быть тебе от меня драну****…* [4: т. 1, 76] *– Իսկ թե որ իմաստություններ չսովորեցնես տղային, – ավելացրեց մայոր Պոտյոմկինը, –* ***կաշիդ կքերթեմ****...* [10: h. 1, 87]

Пётр был ***вне себя*** *от радости…* [4: т. 1, 126] *– Պյոտրն* ***ուրախությունից խելքը թոցրել*** *էր:* [10: h. 1, 154]

Не балуй*,- не позволил фаворит.* [4: т. 1, 167] *–* ***Երես մի տուր****, – թույլ չտվեց ֆավորիտը:* [10: h. 1, 210]

– Не дури! Я тебя дело спрашиваю: какого полка?

– Да никакого. Я ***сам по себе****.* [4: т. 1, 374] *– Մի փչիր: Ես քեզ բան եմ հարցնում՝ ո՞ր գնդից ես:*

– Ոչ մի գնդից: ***Ինքս եմ իմ գլխի տերը****:* [10: h. 1, 489]

Վերը բերված օրինակներում թարգմանության մեջ պահպանվել են դարձվածքների իմաստները, ոճական նրբերանգները, սակայն տարբեր են երկու լեզուներում դարձվածքը կազմող բաղադրիչները:

Խոսքին անսովոր թարմություն են հաղորդում և զանազան վերաբերմունքների արտահայտման միջոց են դառնում դարձվածքների հեղինակային փոփոխությունները: Երբեմն դարձվածքների բաղադրիչները ենթարկվում են կառուցվածքային որոշակի փոփոխությունների, ավելանում են բառեր ու բառակապակցություններ, ընդլայնվում է դարձվածքի նշանակությունը, կամ դարձվածային միավորի բաղադրիչ տարրերը նույն համատեքստում կիրառվում են առանձնաբար՝ հուշելով այդ դարձվածքի գոյության մասին [6: 168–169]: Այսպիսի օրինակներ կան հենց բնագրում, որոնք փոխանցվել են նաև թարգմանությանը.

– ***Крокодилы тоже слезами горькими плачут…*** [4: т. 1, 405] *–* ***Կոկորդիլոսներն էլ են աղի արցունքներով լալիս...*** [10: h. 1, 531]. *крокодиловы слёзы – կոկորդիլոսի արցունք թափել* դարձվածքները երկու լեզուներում կրել են կառուցվածքային փոփոխություններ, վերածվել նախադասությունների:

– Если один дуралей камень в Неву закинет, так потом сорок Вольтеров не знают, как его оттуда вытащить. [4: т. 2, 82] *– Եթե մի հիմար մի քար գլորի Նևայի մեջ, հետո քառասուն Վոլտերներ չեն իմանա, թե ինչպես այն հանեն:* [10: h. 2, 109] Նույն սկզբունքը գործում է առած-ասացվածքների դեպքում. ավելացած բառերը (*Նևա, Վոլտեր*) տեղայնացնում են ասացվածքը:

Համեմատական կայուն կապակցությունների թարգմանության դեպքում հաճախ կիրառում են երկու միջոց՝ կազմում են համապատասխան դարձվածքը կամ պատճենում բնագրից: Այդ պատճառով դրանց փոխարինումը թարգմանության լեզվի համարժեք դարձվածքներով որպես կանոն հանգեցնում է ազգային առանձնահատկու-

թյունների կորստի, թեև իմաստային, ոճական տարրը պահպանվում է [1: 193].

Я ***похудела как скелет****, – рассказывала она о себе в мемуарах, – сильно выросла, лицо вытянулось, волосы выпадали, и я* ***была бледна как смерть****.* [4: т. 1, 49] – *Նիհարել՝* ***կմախք էի դարձել****, – հուշերում գրել է նա իր մասին, – խիստ մեծացել էի, դեմքս երկարել էր, մազերս թափվում էին, և ես* ***սաստիկ գունատ*** *էի:* [10: հ. 1, 52]

Ինչպես տեսնում ենք, բնագրի՝ համեմատությամբ կազմված դարձվածքները մի դեպքում փոխարինվել են ոչ համեմատական դարձվածքով, մյուս դեպքում՝ նկարագրությամբ, ինչն էլ մասամբ հանգեցրել է բնագրի կոլորիտի կորստի:

Դարձվածային միավորների պատճենումը հնարավոր է հատկապես դարձվածային կապակցությունների թարգմանության ժամանակ, քանի որ առանձին բաղադրիչների իմաստից դարձվածքի իմաստը հասկանալի է դառնում, կամ դրանց աղբյուրը հայտնի է՝ գիտության, արվեստի ոլորտ, համաշխարհային գրականություն, պատմություն և այլն [11: 101]: Պատճենումը կամ բառացի թարգմանությունը նախընտրելի է այն դեպքում, երբ ուրիշ միջոցներով, հատկապես դարձվածային, հնարավոր չէ փոխանցել դարձվածային միավորի բառային և ոճական լիարժեք նշանակությունը: Այսինքն՝ պատճենումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ բառացի թարգմանությունը կարող է ընթերցողին հասցնել ամբողջ դարձվածքի ներքին բովանդակությունը, և ոչ թե դրա առանձին բաղադրիչների իմաստները [2: 194–195]: Քիչ չեն դեպքերը, երբ դարձվածքը շփոթվում է ազատ բառակապակցության հետ, թարգմանվում տառացիորեն և տեքստի խեղաթյուրման պատճառ դառնում: Վեպի հայերեն թարգմանության մեջ պատճենմամբ կամ բառացի թարգմանվել են հիմնականում առածասացվածքները: Դրանք մեծ մասամբ չունեն հայերեն համարժեք ձևեր, և պատճենումը որոշ չափով փոխանցել է բնագրի դարձվածքի կամ ասացվածքի նրբերանգը, թեև պետք է նշել, որ դա ոչ բոլոր դեպքերում է հաջողված.

Будь что будет, ***не боги ведь горшки обжигают****…* [4: т. 1, 90] – *Ինչ ուզում է թող լինի. հո* ***աստվածները չեն կճուճ թրծում****…* [10: հ. 1, 107]. ասացվածքի 1. ցանկացած, նույնիսկ բարդ հարցերը լուծվող են, 2. մարդը կարող է ինքը ամեն ինչ անել, լուծել իր խնդիրները [12] բացատրություններին համապատասխան ասացվածք հայերենում չկա, իսկ դրա բառացի թարգմանությունից վերը նշված իմաստները այդքան հստակ չեն հասկացվում:

Вроде бы и неповинны, да ведь ***ехиднин сын всегда норою ехидны пахнет****.* [4: т. 1, 219] – *Կարծես մեղավոր չեն, բայց թե* ***իժի ծնունդից միշտ իժի բնի հոտ է գալիս****:* [10: հ. 1, 280]. ասացվածքի հայերեն թարգմանության մեջ կենդանու տեսակի փոփոխությունը առանձնապես ոչինչ չի փոխել, թեև եքիդնան հայ ընթերցողի մտածողության մեջ որևէ առնչություններ չի առաջացնում՝ ի տարբերություն իժի: Սակայն պատճենված ասացվածքը հայերենում բացակայում է, ուստի դրա իմաստը կարելի է պարզապես կռահել համատեքստից: Թերևս այս առածին իմաստային տեսանկյունից առավել համապատասխան է «պտուղը ծառից հեռու չի ընկնում» առածը:

Но забыла ты, родимая наша, что ***соловьи русские поют только до петрова дня…*** [4: т. 2, 152] – *Բայց, մեր հարազատ, դու մոռացել ես, որ* ***ռուսական սոխակները մինչև զատկի օրն են երգում****…* [10: հ. 2, 201]. այս ասացվածքը հայ ընթերցողին ոչինչ չի ասում, քանի որ ունի զուտ ազգային առանձնահատկություն, հետևաբար հայերեն համարժեքը բացակայում է: Համարվել է, որ սոխակները երգում են մինչև Պյոտրի օրը: Եթե Պյոտրի և Պավելի օրը անձրև էր գալիս, լավ բերք էր կանխատեսվում: Վեպում Եկատերինայի ֆավորիտներից մեկը՝ Կորսակովը այնքան լավ էր երգում, որ համեմատում էին սոխակի հետ: Ի պատասխան դրա՝ Պոտյոմկինը հեգնանքով ասում է վերը բերված ասացվածքը: Թարգմանիչը առավել նպատակահարմար է գտել բառացի թարգմանությունը, որը գրեթե չի հաղորդում բնագրի նրբիմաստները:

Плохие стихи. Но ***дареному коню в зубы не смотрят****.* [4: т. 1, 405] – *Վատ ոտանավոր է: Բայց* ***նվեր ստացած ձիու ատամներին չեն նայի****:*

[10: հ. 1, 521] Այս ասացվածքի հայերեն համարժեքը փոքր-ինչ տարբերվում է ռուսերեն տարբերակից՝ *նվիրած ձիու ատամները չեն հաշվում*, սակայն թարգմանիչը նախընտրել է բառացի թարգմանությունը, ինչը հիմնականում չի խաթարում ասացվածքի իմաստը փոխանցելուն:

Սովորաբար առանձնացնելով թարգմանությունների երեք հիմնական շերտեր՝ համարժեքներ, խոսքաշարային տարբերակներ և նկարագրական թարգմանություններ՝ պետք է նշել, որ համարժեքը կարող է լինել ամբողջական (վերարտադրում է բազմիմաստ դարձվածքի բոլոր նշանակությունները) և մասնակի (վերարտադրում է բազմիմաստ դարձվածքի նշանակություններից մեկը), բացարձակ (համապատասխանում է մյուս լեզվի դարձվածքին թե՛ իմաստային և թե՛ ոճական տեսանկյունից) և հարաբերական (թարգմանությունը վերարտադրում է դարձվածքի իմաստը, բայց ոչ նրա ոճական առանձնահատկությունները) [7: 19–21]: Հարաբերական/մոտավոր համարժեքների դեպքում ԴՄ-ների պատկերային հիմքը տարբեր է, սակայն դրանք ունեն նույն իմաստն ու ոճական համապատասխանությունը [11: 100]: Այսպես՝

Вилами по воде [4: т. 1, 122] – *Ավազի վրա գրված (վերնագիր)* [10: հ. 1, 150]. Դարձվածքի հայերեն համարժեքներն են *սառույցի վրա գրված, ավազի վրա գրված* [9: 51]: Ռուսերենում և հայերենում դարձվածքի պատկերային հիմքերը տարբեր են, սակայն իմաստային և ոճական առումով դրանք համապատասխանում են: Նույնը կարելի է ասել հետևյալ օրինակների մասին, որոնցում առած-ասացվածքների կամ դարձվածքի պատկերային հիմքերը տարբեր են՝ պայմանավորված ազգային լեզվամտածողությամբ, լեզվական առանձնահատկություններով, թարգմանչի նախընտրությամբ.

… пусть только подсохнет грязь на дорогах, он уедет куда ***Макар телят не гонял****.* [4: т. 2, 174] – *… թող միայն ճանապարհների ցեխը չորանա, ինքը կգնա ուր* ***օձն իր պորտով, հավքն իր թևով չի եղել երբեք****:* [10: հ. 2, 230]

– ***С поганой овцы хоть шерсти клок,*** *– сказала Екатерина…* [4: т. 1, 210] – ***Ընից մազ պոկելն օգուտ է,*** *– ասաց Եկատերինան...* [10: հ. 1, 269]

Но иное Потёмкину было ***не по зубам.*** [4: т. 1, 93] – *Բայց ուրիշ բանի համար Պոտյոմկինի* ***ուժերը չէին պատում:*** [10: հ. 1, 110]. Բերված դարձվածքի համար «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանում» համարժեք է նշվում *ատամը չկտրել* դարձվածքը [9: 196]: Թարգմանիչը ընտրել է այնպիսի դարձվածք, որի իմաստը ավելի հեշտ է ընկալել, սակայն պատկերային հիմքը ամբողջությամբ կորել է, և պահպանվել է միայն իմաստը այն դեպքում, երբ հայերենն ունի համարժեքը:

Դարձվածքաբանական թարգմանությունը կարող է ներառել նաև «անհատական» համարժեքները: Թարգմանության լեզվում չգտնելով համարժեք տարբերակ՝ թարգմանիչը երբեմն ստիպված է լինում դիմել դարձվածային նոր միավոր ստեղծելուն: Անհատական դարձվածքները, եթե վարպետորեն են ստեղծվում, թվում են սովորական դարձվածքներ և տարբերվում են միայն նրանով, որ դրանց՝ լեզու մուտք գործելու հավանականությունը քիչ է: Այդ պատճառով այստեղ խոսքը հիմնականում համատեքստային թարգմանության մասին է: Նոր դարձվածք ստեղծելիս թարգմանիչը կարող է օգտագործել թարգմանության լեզվում արդեն եղած դարձվածքները կամ դրանց կաղապարները՝ փոխելով կառուցվածքը, ավելացնելով նոր բաղադրիչներ, միավորելով երկու կամ ավելի միավորներ [2: 187–188]: Իսկ դարձվածքը երբեմն ենթարկվում է փոփոխության հենց բառախաղը պահպանելու համար: Հարկ է նշել, որ բնագրի բառախաղերը փոխանցելու անհրաժեշտություն առաջանալիս պատճենումը նույնպես կարող է արդյունավետ միջոց լինել, քանի որ միշտ չէ, որ դարձվածային միավորի համարժեքը հնարավոր է կամ թարգմանության մեջ ցանկալի է: Համարժեքը որոշ չափով կարող է դեֆորմացնել թարգմանության միավորի ոճական երանգավորումը: Այդ դեպքում փոխանցվում է միայն տեքստի որևէ ֆրագմենտի դենոտատիվ իմաստը, իսկ ոճական նշանակությունը մնում է անհաղորդելի: Նշված դեպքում երբեմն

խոսում են ոճական չեզոքության մասին [3: 411]: Այսպես, ստորև բերված օրինակում բառախաղը պահպանելու համար թարգմանիչը ստեղծել է ասացվածք՝ միևնույն ժամանակ հաղորդելով բնագրի ասացվածքի իմաստը, մինչդեռ հայերենում դրա համարժեքը չունենք.

Но, как часто и бывает в жизни, ***добрая слава лежит, а худая слава бежит****…* [4: т. 2, 283] – *Բայց, ինչպես հաճախ է լինում կյանքում,* ***բարի անունը մնում է ընկած, իսկ վատ անունը դառնում փառապանծ****...* [10: հ. 2, 376]

Նկարագրական թարգմանության դիմում են այն ժամանակ, երբ ԹԼ-ում չկա ԲԼ-ի դարձվածքին ո՛չ բացարձակ, ո՛չ հարաբերական համարժեք ընդհանրապես կամ տվյալ համատեքստում, և հնարավոր չէ նաև բառացի պատճենումը: Այս դեպքում դարձվածքը կարող է թարգմանվել բառով: ԹԼ-ում համապատասխան դարձվածք չլինելու պարագայում հնարավոր է նաև բառապակապակցությամբ, նույնիսկ նախադասությամբ թարգմանությունը. այս դեպքերում թարգամությունը կախված է կոնկրետ համատեքստից, խոսքային իրադրությունից [11: 101]: Նկարագրական թարգմանությունը կարող է լինել բացատրությամբ, համեմատությամբ, մեկնաբանությամբ, այսինքն՝ այն բոլոր միջոցներով, որոնք հնարավորինս պարզ և համառոտ կփոխանցեն դարձվածային միավորի բովանդակությունը [2: 196]: Նկարագրական թարգմանությունը միշտ ուղեկցվում է պատկերավորության կորստով: Այս եղանակով հիմնականում թարգմանվում են այն դարձվածքները, որոնք պարունակում են իրույթներ, և դարձվածքի հիմքում ընկած պատկերը ոչինչ չի ասի հայ ընթերցողին նրա իմաստի մասին: Նկարագրական եղանակով թարգմանվում են նաև այն փոխաբերական դարձվածքները, որոնք իրենց հիմքում ընկած պատկերի յուրահատկության պատճառով չեն ենթարկվում պատճենման [8: 190].

От добра добра не ищут… [4: т. 2, 47] – *Ծակաչք լինելը լավ բան չէ...* [10: հ. 2, 61]: Այստեղ բառացի թարգմանությունը ոչ միայն չէր փոխանցի առածի իմաստը, այլ նաև գուցե իմաստային թյուրըմբռնում առաջացներ: Թարգմանիչը նախընտրել է նկարագրությամբ, բացատրելու միջոցով թարգմանելու եղանակը:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպում դարձվածային միավորները, առած-ասացվածքները բավականին շատ են հանդիպում: Դրանք հայերեն թարգմանության մեջ ենթարկվել են տարբեր փոխարինումների: Թարգմանիչը հնարավորինս փորձել է հավատարիմ մնալ բնագրի դարձվածային միավորների կիրառությանը, ուստի հիմնականում թարգմանել է կամ բացարձակ համարժեքով, կամ պատճենմամբ: Վերջինիս դեպքում որոշ անհարթություններ կան՝ պայմանավորված դարձվածքի կամ ասացվածքի իմաստը ընկալելու դժվարությամբ, երբ բառացի թարգմանված դարձվածային միավորը հայ ընթերցողին ոչինչ չի ասում, թեև այդ կերպ որոշ չափով պահպանվում է բնագրի կոլորիտը: Բառախաղերում արտահայտված դարձվածային միավորների թարգմանությանը թարգմանիչը հետաքրքիր լուծումներ է տվել՝ փոխելով դարձվածքը, բայց պահպանելով բառախաղն ու իմաստը հաղորդելով այդ կերպ:

ЛИТЕРАТУРА

1. *Виноградов В.С.* Введение в переводоведение (общие и лексические вопросы). – М.: Изд-во института общего среднего образования РАО, 2001. – 224 с.
2. *Влахов С., Флорин С.* Непереводимое в переводе: учебное пособие. – М.: Международные отношения, 1980. – 349 с.
3. *Гарбовский Н.К.* Теория перевода. – М.: Изд. Московского университета, 2007. – 554 с.
4. *Пикуль В.С.* Фаворит: [О Г.А. Потемкине]. Роман-хроника времен Екатерины II. В 2-х тт. / Валентин Пикуль; [Вступ. ст. Ю.А. Лимонова; Худож. Г.П. Фильчаков]. – Л.: Лениздат, 1984. – Т. 1. – 583 с.; Т. 2. – 550 с.
5. *Ազիզբեկյան Զ.Ռ.* Դարձվածքների թարգմանության խնդրի շուրջ // ՀՀ ԳԱԱ, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3: – Երևան, 2011: – ԷԷ. 192–200:

6. *Ավետիսյան Յու.* Հայոց լեզու և խոսքի մշակույթ։ – Երևան։ ԵՊՀ-ի հրատ., 2016։ – 512 էջ։
7. *Բարլեզիզյան Ա.Կ.* Ֆրանսերեն դարձվածքների հայերեն թարգմանության մասին // Լեզու և լեզվաբանություն, Հտ. 2։ – Երևան, 2018։ – ԷԷ. 17–24։
8. *Թովմասյան Հ.* Դարձվածային միավորների պատկերավորության վերարտադրության հարցը անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ։ – ԷԷ. 186–191։
9. *Մելքումյան Ռ., Պողոսյան Պ.* Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան։ – Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1975։ – 615 էջ։
10. *Պիկուլ Վ.* Ֆավորիտ : Վեպ 2 հտ. / Վ. Պիկուլ; Թարգմ.՝ Վ.Բ. Վարդանյան; Գրախոս.՝ Յու.Ա. Լիմոնով, Գ.Ն. Մոիսեևա; Խմբ.՝ Ս.Մ. Մովսիսյան։ – Երևան, «Հայաստան» հրատ., 1989։ – Հտ. 1 – 773 էջ, Հտ. 2 – 742 էջ։
11. *Քամալյան Ա.* Թարգմանության տեսության հիմունքներ։ – Երևան, ԵՊՀ-ի հրատ., 2020։ – 162 էջ։
12. Dslov.ru – некоммерческий интернет-проект, содержащий сведения по темам: Цитаты и фразы, Библиотека и др. темы. [Электронный ресурс]. – Режим доступа: https://dslov.ru/pos/p1579.htm (Дата обращения: 28.03.2023г.).

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆԵՐԸ Վ. ՊԻԿՈՒԼԻ «ՖԱՎՈՐԻՏ» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ.Հ. Ծատուրյան .
tsaturyan-1997lilit@mail.ru

Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ,
Երևանի պետական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրված է Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպում որոշ դարձվածային միավորների, առած-ասացվածք-

ների հայերեն թարգմանությունը: Ներկայացված են դարձվածային միավորների թարգմանության համար թարգմանության տեսության մեջ առաջարկված տարբեր մեթոդները, փոխարինման տարբերակները, թարգմանության ընթացքում ի հայտ եկած անհարթությունները՝ պայմանավորված դարձվածքի կամ ասացվածքի իմաստը ընկալելու դժվարությամբ, բնագրի կոլորիտը պահպանելու անհրաժեշտությամբ և այլ գործոններով: Առավել բարդ է բառախաղերում կիրառված դարձվածային միավորների թարգմանությունը, որոնց համար թարգմանիչը փորձել է հետաքրքիր լուծումներ տալ: Անդրադարձ է արված նաև այն հարցին, թե փոխարինման որ տարբերակը որ դեպքում է նախընտրելի:

Բանալի բառեր՝ դարձվածային միավոր, փոխարինում, բառախաղ, ոճական առանձնահատկություն, համարժեք, համատեքստ, պատճենում:

SUBSTITUTIONS OF PHRASEOLOGICAL UNITS IN ARMENIAN TRANSLATION OF V. PIKUL'S NOVEL «THE FAVORITE»

L. Tsaturyan
tsaturyan-1997lilit@mail.ru

PhD student at the Department of Language,
Yerevan State University
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The Armenian translation of some phraseological units and proverbs in V. Pikul's novel «The Favorite» was investigated in the article. There are presented various methods proposed in the theory of translation for the translation of phraseological units, substitution options, irregularities that have arisen during translation due to the difficulty of understanding the meaning of a phraseological unit or proverb, the need to preserve the original color

and other factors. The translation of phraseological units used in word plays is more difficult. The translator tried to give interesting solutions for them. The question is also considered which substitution option is preferable in which case.
Keywords: phraseological unit, substitution, word play, stylistic feature, equivalent, context, calque.

Информация о статье:
статья поступила в редакцию 29 августа 2023 г.,
подписана к печати в номер 12 (16) / 2023 – 15.12.2023 г.